



## Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ Ընկերության կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմնի սերտիֆիկացման նշանի կիրառումը

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ Ընկերության կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինը սահմանել է իր կողմից պատվիրատուին տրված ցանկացած կառավարման համակարգերի սերտիֆիկացման նշանի կիրառման վերաբերյալ կանոններ, համաձայն ՀՍ ԻՍՕ/ԻԷԿ 17021-1, ՀՍ 5.6 ստանդարտների պահանջների: Կառավարման համակարգերի սերտիֆիկացման նշանն ապահովում է, ի թիվս այլոց, հետևելիություն դեպի սերտիֆիկացման մարմինը:

Նշանը կամ ուղեկից տեքստը չեն պարունակում որևէ երկիմաստ ձևակերպում սերտիֆիկացման և սերտիֆիկացման մարմնի վերաբերյալ:

Նշանը չի օգտագործվում ապրանքի կամ դրա փաթեթավորման վրա՝ սպառողի համար տեսանելի տեղում, կամ որևէ այլ եղանակով, որը կարող է մեկնաբանվել որպես ապրանքի համապատասխանության նշան:

Սերտիֆիկացված կառավարման համակարգի համապատասխանության նշանը չի կարող օգտագործվել արտադրանքի մակնշման, ինչպես նաև դրա սերտիֆիկացումը հաստատելու համար:

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ Ընկերության կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինը թույլ չի տալիս իր նշանի կիրառումը լաբորատոր փորձարկումների, ինչպես նաև տրամաչափարկման կամ հսկողության արձանագրություններում կամ սերտիֆիկատներում:

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ Ընկերության կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինն իրականացում է պատշաճ հսկողություն իր սեփականության իրավունքի նկատմամբ և անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում սերտիֆիկացման կարգավիճակի ոչ ճիշտ վկայակոչման, ինչպես նաև սերտիֆիկացման փաստաթղթերը, նշանները կամ առողիտի հաշվետվությունները շփոթեցնող եղանակով օգտագործելու դեպքերը կանխելու ուղղությամբ:

Կազմակերպությունը կառավարման համակարգի համապատասխանության նշանը կարող է կիրառել կառավարման համակարգի սերտիֆիկատի գործողության ժամկետի ընթացքում:

Կառավարման համակարգի համապատասխանության նշանի չափերը և զետեղման տեղը որոշում է դրա կիրառման իրավունքն ունեցող կազմակերպությունը:

Կառավարման համակարգի համապատասխանության նշանը տնօրինող կազմակերպությունն այն կարող է օգտագործել գովազդային նպատակներով (տեղադրելով գրասենյակային պիտույքների, ֆիրմային բլանկների, այցեքարտերի և այլի վրա):